«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը »

Դաստիարակ՝ Մարիամ Եղոյան

Մանկապարտեզ՝ « Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
Գլուխ 1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ..... 4
ԳԼՈՒԽ 2 6
« ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ»..... 6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 10
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների մեջ ստեղծագործական ունակությունների կարևորությունը , ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումները ձևավորվել են դեռևս հնագույն ժամանակներում՝ մանկավարժ Մարիա Մոնտեսսորիի և իտալացի մանկագիր լրագրող Ջանի Ռոդարիի կողմից:

Իրենց աշխատությունների մեջ նրանք անընդհատ անդրադարձ են կատարել այս թեմաների կարևորությանը: Մեջբերելով Մ. Մոնտեսսորիի խոսքերը. «Մարդու առաքելությունը նրանում է որպեսզի բացահայտի իր ծրագրերը, ազատ արձակի իր ներուժը, զարգացնի տաղանդը, որոնք տրված է Աստծու, տիեզերիքի , բնության կողմից և կարողանա երախտիքով կիրառել այդ շնորհները լիարժեք և երջանիկ ինքնահաստատման համար »:

Մոնտեսսորիի դպրոցում ամենը կատարվում էր վերը նշված սկզբունքով՝ կրթելով և դաստիարակելով ազատ, անկաշկանդ, ստեղծագործող անհատների:

Ջանի Ռոդարին լինելով մանկագիր ,լրագրող ևս շատ էր կարևորում երեխաների ինքնուրույնությունը, ազատ խոսքը, երեխաներին ստեղծագործելու հնարավորություններ տալը : Նա իր ստեղծած մանկավարժական մեթոդներում բազում հնարներ էր գտել ՝ խթանելու համար այդ ամենին:

<u>Հետազոտության նպատակը</u>

Աշխատանքի ուսումնասիրության նպատակն է երեխաների մեջ էլ ավելի զարգացնել նրանց ստեղծագործական ունակությունները, նպաստել նրանց ինքնուրույն դրսևորմանը, նրանց մեջ ձևավորել սեփական կարծիքն ու մտքերը արտահայտելու կարողություններ, նախաձեռնողականություն, իրենց ես-ը կարևորելու հանգամանքը

<u>Թեմայի ընտրությունը</u>

Աշխատելով նախադպրոցական հաստատությունում՝ որպես միջին խմբի սաների դաստիարակ, մշտապես փորձել եմ աշխատել այնպիսի կանոններով,սկզբունքներով, որոնց ընթացքում կզարգանան երեխաների միտքն ու կընդլայնվի նրանց ստեղծագործական հորիզոնը: Ինքս ազատ եմ թողնում իմ սաներին ՝ իրենց աշխատանքների կատարման ձևը ընտրելու, խաղերի մասնակցության, հեքիաթների ընտրության հարցերում, ինչը մեկ անգամ ևս նպաստում է նրանց ստեղծագործական մտքի զարգացմանը, ինքնուրույն դրսևորվելու

<u>Հետազոտությունն իրականացնելու նպատակը</u>

Ինձ համար կարևոր է երեխայակենտրոն աշխատանքը, իսկ այս թեման ուղղված է հենց դրան. անել այնպես, որ շեշտը դրված լինի երեխայի , նրա ինքնուրույնության, ստեղծագործականության, նախաձեռնողականության վրա:

Հետազոտությունն իրականացնելու նպատակները տարբեր են.

ա/ ստեղծել երեխայակենտրոն, երեխայամետ աշխատաքներ ՆՈՒՀ-ում,
բ/ օգնել և աջակցել երեխաներին իրենց ստեղծագործական , ինքնուրույն աշխատելու մեջ դրսևորվելուն և այլն:
գ/նպաստել երեխաների գեղագիտական ճաշակի զարգացմանը
դ/մոտորիկայի զարգացում

<u>Իմ հետազոտության արդյունքում կցանկանամ հասնել...</u>

Այս հետազոտության արդյունքում կցանկանամ հասնել նրան, որ մանկավարժները մշտապես հիշեն ու երեխաների հետ իրենց առօրյան կազմակերպեն այնպես, որտեղ երեխան կլինի գլխավոր, առաջատար դերում, որտեղ մանկավարժը թույլ կտա երեխայի ինքնարտահայտվելուն, չի խոչընդոտի նրա ինքնուրույնությանը, ազատ կամքի դրսևորմանը: Կցանկանամ երեխաները հասկանան և գիտակցեն իրենց ինքնուրույն աշխատանքի կարևորությունը:

<u>Ընթացք</u>

«Ապլիկացի»առարկայի պարապմունք :

Պարապմունքի ընթացքում երեխաները պետք է տան մարդուկին ամբողջական տեսք՝ իրենց երևակայության սահմաններում:

Պարապմունքի ընթացքը կատարվել է ԽԻԿ համակարգով:

<u>Բաժինները</u>

/ԽԻԿ համակարգ/

1-ին մաս՝ Տեսական զրույց /Խթանման փուլ/

2-րդ մաս՝ Ֆիզկուլտդադար՝ « Մատիկներ »

3-րդ մաս՝ Պարապմունքի ընթացք / Իմաստի ընկալման փուլ/

4-րդ մաս՝ Ամփոփում, քննարկումներ, կարծիքների փոխանակում / Կշադատման փուլ/

<u>Գլուխ 1</u> ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Վերը նշված գլխում մենք անդրադարձ կատարեցինք Մարիա Մոնտեսսորիի առաջադրած մեթոդների մասին, ում համար առաջնային էր երեխայի

ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը և խաղը, որն ըստ նրա ազատության դրսևորման լավագույն ձևերից մեկն է:

Մոնտեսորիի դպրոցում երեխաների հետ դասերի համար օգտագործվող նյութերը մշակվել են հաշվի առնելով երեխաների մանկավարժական հատկանիշները, ինչպես նաև նրանց զգայուն շրջանները, որոնք Մարիա Մոնտեսորիի կողմից նշանակված են այս տարիքում վարվող գործունեության տեսքով: Այս նյութերը բուռն զարգանում են երեխաների ճանաչման մեջ, ակտիվացնում են ինքնակառավարման գործընթացը, խթանում ստեղծագործելուն, օգնում են համակարգել արտաքինից ստացված տեղեկությունները: Սենսացիոն զարգացման ընթացքում երեխան հոգևորապես զարգանում է, և Մոնտեսսորիի նյութերով երեխաների համար նախատեսված անկախ խաղերը պատրաստում են նրանց ակտիվ և անկախ կյանքին:

Մոնտեսորիի մեթոդի հիմնական սկզբունքները հիմնված են հետևյալի վրա. յուրաքանչյուր երեխա եզակի է և պահանջում է հատուկ մոտեցում կրթության և վերապատրաստման մեջ: Վերապատրաստման համակարգը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ուսուցիչ, երեխա եւ շրջակա միջավայր: Այն էլ իր հերթին հիմնված է երեք հիմնական սկզբունքների վրա.

- *երեխայի առավելագույն ազատություն, զարգացման և ուսուցման միջոցների ,տեմպերի ընտրություն,*
- *անհատական վերապատրաստման ծրագրի ստեղծում,*
- *ուսուցիչի նվազագույն միջամտություն և ուսումնական արդյունքների վերաբերյալ ավանդական ավտորիտար վերահսկողության բացակայություն:*

Մոնտեսսորին կողմ էր երեխաների զգացմունքների դաստիարակությանը: Մոնտեսսորիի մանկապարտեզում իրականացվող նույնիսկ ամենասովորական աշխատանքի ժամանակ երեխաները որևէ առարկա նկարելիս պետք է բացատրեն , թե դրանք ինչի են նման՝ « աստղի», «ծաղիկի», «օդապարուկի» և այլն :

Նա կոչ է անում նաև ծնողներին, որ անհրաժեշտ է երեխաներին ոչ թե խրատել և

սովորեցնել , այլ խաղալ և ստեղծագործորեն երևակայել, հորինել հեքիաթներ, բանաստեղծություններ, հանելուկներ և այլն: Միայն այդ ճանապարհով կարող ենք թափանցել երեխաների երևակայական, ստեղծագործական հիասքանչ աշխարհ:

Իր ինքնատիպ հայացքներով մանկավարժության մեջ նաև աչքի ընկավ իտալացի մանկագիր Ջանի Ռոդարին: Նա լրջորեն զբաղվել է ստեղծագործական ունակություններով օժտված անձնավորության ձևավորման խնդիրներով: Նրա կարծիքով, ստեղծագործական երևակայությունը անհատների մենաշնորհը չէ, դրանով օժտված են բոլորը: Պարզապես անձի զարգացման այդ և այլ



ուղղություններով պետք է զբաղվել վաղ տարիքից: Այդ առումով նա մշակել է բազմաթիվ մեթոդներ, օրինակ՝ «Ստեղծագործական երևակայության երկանդամություն», « Ի՞նչ կլիներ եթե...», « Հեքիաթի աղավաղում » և այլն:

Ջանի Ռոդարիի «Ստեղծագործական երևակայության երկանդամություն» աշխատությունը նվիրված է երեխայի բազմակողմանի դաստիարակությանը, նրա անհատականության ձևավորմանը: Այս աշխատության մեջ Ռոդարին շեշտադրում է վաղ կրթության հիմնական խնդիրը. զարգացնել երեխայի երևակայությունը և առաջարկում է բազմաբնույթ ուղիներ , որոնց օգնությամբ խթանվում է երեխայի ստեղծագործական երևակայությունը:

Ռոդարին երեխաների ստեղծագործական ունակությունները, երևակայությունը խթանելու իր մեթոդները մշակելիս հիմնվել է հոգեբանների, մանկավարժների, լեզվաբանների աշխատանքների վրա: Նրա համար երեխաների ստեղծագործելն առաջին տեղում է: Իսկ ո՞ր տեղում է ուսուցիչը/ դաստիարակը/: Ուսուցիչը /դաստիարակը/ պետք է ստանձնի «ոգեշնչողի», «խրախուսողի» դերը.հետևաբար նա ավելի պասիվ դերում է, իսկ երեխան առաջնային:Եվ Ռոդարիի ստեղծած մեթոդներով էլ սկսեցին աշխատել և՛ նախկինում, և՛ մեր ժամանակներում: Նրա մեթոդները նման են նաև Մոնտեսսորիի մեթոդներին, և շատ հաճախ նրանք երկուստեք եկել են համաձյնության՝ մշակելով մի նոր մեթոդ:

ԻՆչպես երևում է վերը նշվածում , բոլոր ժամանակներում կարևորություն է տրվել երեխաների ինքնուրույնությանը, ստեղծագործական մտքի զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2

« ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ»

Խումբ՝ Միջին խումբ

Առարկա՝ « Ապլիկացիա »

Պարապմունքի տևողություն՝ 20-25 րոպե

Թեմա՝ « Մարդուկի մազեր »

Նպատակ՝ Զարգացնել երեխաների մեջ ինքնուրույն աշխատելու կարողությունը, ստեղծագործականությունը, երևակայությունը, զարգացնել մանր մոտորիկան, մկրատի հետ ճիշտ աշխատելու կարողությունը:

Նյութեր՝ Մինչ պարապմունքն սկսելը խումբը համալրված էր տարբեր դիդակտիկ առարկաներով՝ տիկնիկներ /տղա-աղջիկ/, մարդուկներով պլակատ ՝ տարբեր դեմքի արտահայտություններով, տարբեր մազերով / ուղիղ, գանգուր, կարճ, երկար և այլն /:

- Պարապմունքի առաջին մաս՝ զրույց սաների հետ:

- Երեխաներ, կարո՞ղ եք ասել մարդու մարմնի մասերը:

Երեխաները պատասխանեցին.

-Մարդու մարմնի մասերից են ՝ գլուխ, ոտք , ձեռք և այլն:

-Իսկ կարո՞ղ եք ասել՝ մեր գլխի վրա ի՞նչ մասեր եք տեսնում:

-Մենք մեր գլխի վրա տեսնում ենք քիթ, բերան, ականջ, լեզու, աչք և այլ:

-Իսկ հիմա ինձ ասեք ՝մեր գլխի վրա մենք ինչե՞ր ունենք:

-Գլխի վրա մենք ունենք մազեր:

-Ճիտ է: Կարո՞ղ եք յուրաքանչյուրդ նկարագրել , թե ձեր մազերն ինչպիսի տեսք ունեն:

/Երեխաներից մի քանիսը հերթով կանգնում են և տալիս տարբեր պատասխաններ՝ « Իմ մազերն ուղիղ են» , « Իմ մազերը երկար են», «Իմ մազերը սև են», «Իմ մազերը գեղեցիկ են» և այլն/:Այս և նմանատիպ մի փոքր զրույցի միջոցով երեխաների հետ

վերհիշեցինք մեր մարմնի մասերը, բնութագրեցինք մեր մազերը: Այնուհետև ես երեխաներին ներկայացրեցի մեր օրվա թեման՝ «Մարդուկի մազեր»:

- Քանի որ ապլիկացիայի պարապմունք էր երեխաների առջև նախապես դրված էին սոսինձ, նկար՝ որտեղ մարդուկն առանց մազերի էր, գունավոր թղթեր, մկրատ:
- Ես երեխաներին բացատրեցի մեր պարամունքի ընթացքը. մենք պետք է մեր առջև դրված գունավոր թղթերց ընտրենք այն գույնը, որը ցանկանում ենք, կտրենք այն ուղղահայաց գծիկներով / խթանել մկրատով ճիշտ աշխատելու և ուղիղ կտրելու կարողությունը/ , ծալման միջոցով ամրացնենք մեր մադրուկի մազերի փոխարեն՝ սոսնձելով այն համապատասխան տեղում:
- Որպես կանոն առաջին օրինակը ցուցադրեցի ես: Այնուհետև երեխաները սկսեցին աշխատել ինքնուրույն՝ ստեղծելով իրենց երևակայական մարդուկին:
- Կատարեցինք ֆիզկուլտդադար՝ « Մատիկներ»:

- Երեխաներն սկսեցին աշխատել ինքնուրույն , քանի որ իմ նպատակներից առաջնայինը նրանց ինքնուրույն կատարած աշխատանքի արդյունքն էր , ինչպես այս, այնպես էլ իմ մյուս պարապմունքների ընթացքում:
- Երբ աշխատանքները կատարեցին հերթով յուրաքանչյուրը եկավ, ներկայացրեց իր մարդուկին, նույնիսկ մի քանիսը փորձեցին անուններ դնել իրենց մարդուկներին: Ընկերները նայում էին իրենց մյուս ընկերների աշխատանքները՝ ծափահարություններով ոգևորելով նրանց:
- Երեխաների համար պարապմունքը շատ հետաքրքրիր էր, զվարճալի և գունեղ: Նրանք մեծ բավականություն էին ստացել իրենց կատարած աշխատանքներից:

Մեթոդիստ՝ Ամալյա Քոչարյանը կատարեց դիտարկում պարապմունքի ընթացքում.

« Մարիամ Եղոյանն իր խմբի հետ անցկացրեց « Ապլիկացիա» առարկայից պարապմունք, որը համապատասխան էր կրթական չափորոշչի պահանջներին: Պարապմունքն անցկացվեց ԽԻԿ համակարգով: Երեխաները ունեին բավականին լավ խոսք, երևակայություն: Նրանք իրենց դրսևորում էին ազատ, անկաշկանդ: Դաստիարակը հնարավորություն էր տալիս յուրաքանչյուրին արտահայտվել յուրովի:

Բուն ապլիկացիայի մասը ևս շատ հետաքրքիր էր:

Պետք է ողջունել դաստիարակի՝ երեխաներին ազատ ընտրության հնարավորություն տալու փաստը: Երեխաներն իրենք էին ընտում իրենց ցանկացած գույնը, իրենք էին ընտրում իրենց մարդուկի մազերի ձևն ու տեսքը: Պարապմունքի ընթացքում առկա էր պարապմունքին համապատասխան ֆիզկուլտդադար: Պարապմունքի տևողությունը համապատասխանում էր միջին խմբի համար նախատեսված տևողությանը: Դաստիարակը հասավ այն նպատակին, որն ի սկզբանե դրել էր իր առջև, իսկ երեխաների պատրաստած մարդուկները մեկը մյուսից գունեղ էին, գեղեցիկ և հետաքրքիր»:

Դաստիարակի թեմայի ընտրելու կարևորությունը.

«Ինքս լինելով մեթոդական մասով աջակիցը մեր սաների և դաստիարակների, մշտապես կոչ եմ արել և ողջունել ինքնուրույն, ստեղծագործ անհատներ ձևավորելու փաստը: Թեման մեր օրերին շատ համահունչ է , մշտապես կարևոր մանակավրաժ-սան հարաբերությունների մեջ»:

Տնօրեն՝ Զարուհի Բաբաջանյանը կատարեց դիտարկում պարապմունքի ընթացքում.

«Միջին Բ խմբում տիրում էր հրաշալի մթնոլորտ: Խումբը հագեցած էր դիդակտիկ նյութերով, ապլիկացիա առարկայի պարապմունքին անհրաժեշտ պարագաներով: Մթնոլորտն ազատ էր: Երեխաներն իրենց ազատ էին զգում, նրանց խոսքը բավականին կիրթ էր, շարահյուսորեն ճիշտ և գեղեցիկ կազմված, ինչը վկայում է դաստիարակի մշտական լավ աշխատանքի արդյունքը: Պարապմունքը տևեց 25 րոպե, որը համապատասխան է միջին խմբի սաների հետ անցկացվող պարապմունքների ժամաչափին: Ընթացքը կատարվեց ԽԻԿ համակարգով, որի փուլերն ընտրված էին շատ ճիշտ դասավորվածությամբ: Երեխաներն աշխատում էին ինքնուրույն, կարողանում էին ինքնուրույն օգտվել սոսնձից, մկրատից: Նրանց աշխատանքը բազմակողմանի զարգացնող էր ՝ սկսած մատերի մանր մոտորիկայի զարգացմամբ /թղթերը ծալելու ընթացք/, վերջացրած երևակայության անսահման խթանմամբ: Դաստիարակ Մարիամ Եղոյանը հասավ իր և իր խմբի առջև դրված նպատակին»:

Դաստիարակի թեմայի ընտրելու կարևորությունը.

«Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզը ղեկավարելով , իմ մանկավարժական

աշխատակիցների , երեխաների , ծնողների հետ մշտապես անց եմ կացնում տարբեր հանդիպումներ՝ կարևորելու և ներկայացնելու համար երեխայի ինքնուրույնության, ստեղծագործելու կարողության կարևորությունը: Մեր նախադպրոցական ուսումնական հաստատությունում ես /ինձ հետ նաև իմ թիմակիցները/ մշտապես ստեղծում ենք խաղեր, այլընտրանքային պարապմունքներ, հեքիաթի ընթերցումներ՝ բեմականացված և տիկնիկային տարբերակներով, ունենք մանկավարժական երգչախումբ, մանկավարժական թատերական խումբ, որին նաև շատ հաճախ ներգրավվում են երեխաները:

Այս ամենի միջոցով մենք երեխաների մոտ վեր ենք հանում ստեղծագործելու կարողությունը, ընդլայնում ենք երևակայության սահմանները:

Թեման միանշանակ հետաքրքիր էր և շատ կարևոր ինչպես հիմա, այնպես էլ բոլոր ժամանակներում»:

Միջին Ա խմբի դաստիարակ Աստղիկ Սահակյանը կատարեց դիտարկում պարապմունքի ընթացքում.

«Ինքս էլ աշխատում եմ միջին խմբում որպես դաստիարակ: Նայելով Մարիամ Եղոյանի պարապմունքը, կարող եմ ասել, որ պարապմունքի տևողությունը սահմանված կարգով էր, թեման հետաքրքիր և ուսուցանող, առկա էր շատ գեղեցիկ ֆիզկուլտդադար: Երեխաները կարողանում էին ինքնուրույն աշխատել, կտրել, սոսնձել: Նրանք շատ գեղեցիկ ներկայացնում էին իրենց, իսկ հետո նաև իրենց աշխատանքները: Թեման համապատասխան էր կրթական համալիր ծրագրին:Ինձ դուր եկան մարդուկների հետ աշխատելու նման այս գաղափարը»:

Դաստիարակի թեմայի ընտրելու կարևորությունը.

«Կարծում եմ թեման շատ կարևոր է, քանի որ մեր օրերի մանկավարժությունը ամեն բան անում է , որպեսզի մանկապարտեզները լինեն երեխայակենտրոն: Իսկ այդ ամենի համար շատ կարևոր են երեխաների երևակայության զարգացումը, ինքնուրույնությունը, ստեղծագործելու ունակությունները»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատության , ինչպես նաև իմ աշխատանքային փորձի ընթացքում, մեկ անգամ ևս եկա հետևյալ համոզմանը և եզրահանգմանը. երեխային պետք է հնարավորություն տալ ստեղծագործելու, միայն դրա միջոցով կզարգանա նրա երևակայությունը, միայն այդ կերպ նա կոգեշնչվի որպես ինքնուրույն աշխատանք կատարող անհատ:

Կարևորելով Մարիա Մոնտեսսորիի առաջադրած սկզբունքները վերը նշված իմ ուսումնասիրության շրջանակներում, իմ աշխատանքը կավարտեմ նրա հետևյալ տողերով՝

« Սովորեցրու ինձ դա անել ինքնուրույն...»:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1/https://villamontessori.am/hy/126-2/

2/https://boon.am/autonomy/

3/https://hy.tierient.com

4/https://hy.unistica.com/%D5%B4%D5%B8%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8/

5/https://yandex.ru/images/search

6/ Ջուլիետտա Գյուլամիրյան « Մանկավարժների դասախոսությունների փաթեթ»